

Ասաց . Ամբոխն է թշնամի ,
 Եւ նըւիրակն կողմըն նոցին .
 Ազգականացս եմ առեւի ,
 Քահանայք տան վըճիռ ինձի :

Երբ հասաւ իր ականջին լուրը, թէ իր երեսին նաեւ եկեղեցին փակեցին, որոչեց վերջին յուսահատական քայլն առնել, յուսալով գտնել ելք մը անել կացութենէն :

Որովհետեւ չէր ուզած ժողովուրդը տեղի տալ իւր յամառութեան եւ նուիրակը կակղել իւր խստասրտութիւնը, չըլլալու համար «գետնի հաւասար», առաւ ճգնաժամային քայլը : Գնաց «առ եկեղեցականս Ֆռանկաց» եւ յայտարարեց թէ պատրաստ է ինքը մտնել ի միութիւն Հռովմէական Ս . Եկեղեցւոյ, եթէ յանձն առնեն անոնք օգնել իրեն ձեռք բերելու եկեղեցին եւ պաշտպանել զինքը իւր հակառակորդներուն առաջ : Անոնք յանձն առին : Սիմէոն դպիր կը գրէ .

Եպիսկոպոսն այն խիստ թերի ,
 Հարեղայիւքն ամենայնի ,
 Մըտան Լեհու եկեղեցին .
 Երգուան լինել կրօնքս Ֆրոանկին :

Նիկողայոս Եպիսկոպոս իւր հաւատոյ դաւանութիւնը տուաւ 1630, Օգոստոս 30ին : Վարդան Յունանեան կը գրէ ¹⁷ . «Նիկողայոս Թօրօսօվից . . . արար հանգիսապէս աստ զդաւանութիւն կաթողիկէ Եկեղեցւոյն Հռօմայ ,

¹⁷ Հմմտ . Կամենից , էջ 126 :